CIPE

բիզնեսի բարեվարքության ակումբ

Կորպորատիվ Կառավարման Կենտրոն

Մեծամասնությանը չպետք է վերաբերվել որպես փոքրամասնության. Հեդվիջ Նույենսի խորհուրդները հայ կանանց

Առաջխաղացման համար բավարար չէ խելացի լինել ու ինչ-որ բան քրտնաջան անել: Եթե ցանկանում եք ավելի արագ կամ հեշտ առաջադիմել, դուք պետք է խոսեք ձեր գործերի մասին, և թե ինչպես եք նպաստում ձեր կազմակերպության նպատակների իրագործմանը: Կիսվեք ձեր փորձով և հաջողությամբ, ընդլայնեք ձեր կապերն ու դարձեք ցանցի ակտիվ դերակատար: Հետևաբար, անհրաժեշտ է հոգ տանել հետևյալ երեք անելիքների մասին՝

- լինել խելացի,
- շատ աշխատել և
- լինել սեփական PR մենեջերը:

Դուք ձեզ պետք է դնեք առաջին տեղում: Հնչում է եսամոլական, սակայն հիշեք ինքնաթիռի անվտանգության կանոնները. մինչև ինչ-որ մեկին օգնելն առաջինը դուք ինքներդ ձեզ պետք է օգնեք՝ դիմակ հագնելով:

Սովորեք դուրս գալ ձեր հարմարավետության գոտուց և օգտվել հնարավորություններից: Հիշեք, որ դուք ինքներդ եք կառուցում ձեր կյանքի ուղին և պարտավոր չեք որևէ մեկից թույլտվություն խնդրել:

Տեսանելի լինելը շատ կարևոր է:

Շատ կարևոր է նաև տղամարդկանց բանավեճի մեջ ներքաշելը: Սովորեք բանակցել, ազդել և անհրաժեշտության դեպքում արտահայտել ձեր կարծիքը: Իմացեք՝ շատ տղամարդիկ ուզում և պատրաստ են օգնել: Սովորեք ինչպես տղամարդկանցից, այնպես էլ կանանցից ստանալ «այո՛» պատասխանը:

Հիշեք՝ դուք չեք կարող ամեն ինչ անել միայնակ: Հայցեք օգնություն:

Կասկածեք: Կասկածելով դուք կարող եք պաշտպանել ինքներդ ձեզ, քանի որ մինչև ինչ-որ բան անելը դուք կմտածեք մի քանի անգամ: Սակայն ձեր կասկածները չպետք է ձեզ արգելակեն:

Վերջինը, բայց ոչ պակաս կարևորը. վստահությունն ունի էական նշանակություն: Եթե դուք չեք համարձակվում վստահել մարդկանց, ոչինչ էլ չեք ստանում: Եթե դուք բաց չեք և չեք վստահում, դուք բարդացնում եք ձեր կյանքը:

Անկաշկանդ եղեք և կապ հաստատեք **Հեդվիջ Նույենսի** հետ *LinkedIn*-ում կամ այցելեք «Եվրոպացի կանայք տնօրենների խորհրդում» կազմակերպության կայք՝ **www.europeanwomenonboards.eu**: